



ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ

Հողի նախապատրաստում

Պտղատու այգու հողի նախապատրաստման բնույթը պայմանավորված է նրա տիպով և մշակվածության աստիճանով (տարբեր աստիճանի մշակված կամ խոպան հողեր):

Մշակված հողերն անհրաժեշտ է պարարտացնել հանքային պարարտանյութերով և ապա խոր հիմնաշրջել: Ավելի սակավ բերրի, համեմատաբար ծանր հողերը պարտադիր է պարարտացնել նաև օրգանական պարարտանյութերով:



Պտղատու ծառերի նորմալ աճի ու բերքատվության համար կարևոր նշանակություն ունի հողի որակը, նրա մեխանիկական ու քիմիական կազմը, ջրաթափանցության ու օդաթափանցության ունակությունը, աղերի ու կրային մասի քանակը, օրգանական նյութերի պարունակությունը: Ինչպես հայտնի է, հողերը լինում են թթու, չեզոք և հիմնային: Հայաստանում հողերը չեզոք են և հիմնային: Ընդհանրապես մեր հանրապետությունում մշակվող պտղատու ծառերը լավ են աճում և բարձր բերքատվություն են ապահովում, եթե այգին հիմնվում է օրգանական



նյութերով՝ հումուսով հարուստ, բերրի, փուխր, միջակ կավային, լավ ջրաթափանց և օդաթափանց ստրուկտուրային հողերում, որոնք ունեն նաև խոնավություն պահելու բարձր ունակություն:

Հողի, ինչպես և ենթահողի նկատմամբ տարբեր պտղատեսակներ տարբեր պահանջ ունեն, որը պետք է անպայման նկատի ունենալ այգու հիմնման համար հողը ընտրելու ժամանակ: Համառոտակի բնութագրենք առանձին պտղատեսակների հիմնական պահանջները հողի նկատմամբ:



ԴԵՂՁԵՆԻ

Դեղձենին լավ աճում և առատ պտղաբերում է ջրաթափանց տաք կավաավազային, հաստ շերտ ունեցող ավազակավային, հետանտառային, շագանակագույն և գորշ կարբոնատային հողերում, եթե դրանք ամբողջ վեգետացիայի ընթացքում լրիվ ապահովված են ռոտզման ջրով: Սառը կավային, ճահճացած, անթափանց ենթահող ունեցող և չոր ավազային հողերում դեղձենին վատ է զարգանում, ուստի խորհուրդ չի տրվում նման հողամասերում հիմնել դեղձենու տնկարկ:



ԾԻՐԱՆԵՆԻ

Ծիրանենին հաջողությամբ աճում և պտղաբերում է լավ ջրաթափանց, թեթև կավաավազային, ավազակավային քարքարոտ կրային հողերում: Շատ վատ է զարգանում ծանր կավային և գերխոնավ հողերում, որոնց ենթահողը ջրակուտակման բարձր ունակություն ունի:



ԽՆՃՈՐԵՆԻ

Խնձորենու նորմալ աճման և պտղաբերման համար բարենպաստ են կավաավազային, հետանտառային, շագանակագույն և բերրի, հզոր սևահողերը, որոնք լավ ջրաթափանց են և ունեն ջրունակ ենթահող: Խնձորենին վատ է զարգանում թեթև ու չոր ավազային, ուժեղ կարբոնատային ու քարքարոտ, սակավազոր, ինչպես նաև ծանր կավային, սառն ու շատ խոնավ հողերում:



ՏԱՆՁԵՆԻ

Տանձենին ևս լավ է զարգանում փուխր, հզոր վարելաշերտ ունեցող, սննդանյութերով հարուստ ու ջրաթափանց ավազակավային հողերում, եթե դրանք ամբողջ վեգետացիայի ընթացքում լրիվ ապահովված են ոռոգման ջրով:



ՄԱԼՈՐԵՆԻ ԵՎ ՇԼՈՐԵՆԻ

Այս մրգերը հաջողությամբ աճում և պտղաբերում են տարբեր տիպի հողերում, բայց ավելի գերադասելի են ջրաթափանց կավաավազային հողերը: Համեմատաբար վատ են աճում նաև ծանր կավաավազային և թեթև կարբոնատային հողերում, բայց թույլ են աճում ու պտղաբերում ճահճացած, ինչպես նաև չոր, ջրով վատ ապահովված ապառաժային քարքարոտ հողերում:



ԿԵՌԱՍԵՆԻ

Կեռասենու զարգացման համար ավելի բարենպաստ են ջրաթափանց, թեթև, բայց պարարտ ավազակավային հողերը: Համեմատաբար վատ չի աճում թույլ կարբոնատային և նույնիսկ նախալեռնային գոտու քարքարոտ, բայց ջրով լրիվ ապահովված հողերում: Սակայն աճը թույլ է ընթանում, և բերքը ցածր է լինում չոր ավազային, ինչպես նաև աղակալած ու ճահճացած հողերում:

ԲԱԼԵՆԻ

Բալենին ունի ծագումով իրարից խիստ տարբերվող սորտեր, որոնք հաջող աճում և պտղաբերում են տարբեր տիպի հողերում: Մեր տեղական բալենին և բերովի հարավային սորտերը ավելի լավ են աճում ու պտղաբերում խոնավություն պահպանող կավաավազային և ավազակավային հողերում: Համեմատաբար վատ չի աճում ջրով լրիվ ապահովված առապարային հողերի կարբոնատների բարձր պարունակության պայմաններում, բայց չի դիմում աղակալված հողերում:



ԸՆԿՈՒԶԵՆԻ

Ընկուզենին լավ է աճում ձորերի և ձորակների բերովի, խոնավությունը լավ պահպանող կավաավազային և ավազակավային հողերում, ինչպես նաև հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան կողմնադրության լանջերի անտառային ու հետանտառային հողերում: Մեծահասակ ընկուզենու արմատները զարգանում են մինչև 5-6 մետր և ավելի խորը ընկած հողաշերտում, որտեղից ծառը ապահովվում է ջրով և դրա շնորհիվ աճում ու պտղաբերում է համեմատաբար չոր և նույնիսկ քարքարոտ հողերում: Սակայն աճը թույլ է ընթանում, վատ է պտղաբերում կամ միանգամայն չի դիմանում աղակալած, ծանր և սառը կավային ու ճահճացած հողերում:




ՆՈՒ

Նոնենին չունի ուղղաձիգ խորը գնացող արմատներ, բայց բավականաչափ չորադիմացկուն է և լավ է զարգանում տարբեր տիպի հողերում, հատկապես փուխր, ջրաթափանց ավազակավային հողերում: Դիմանում է հողի թույլ աղակալվածությանը, բայց չի հանդուրժում ծանր, չտաքացվող հողերը:



Դարավանդների կառուցումը: Մեր սակավահող լեռնային հանրապետության պայմաններում 8-10°-ից մինչև 20-25° թեքության լանջերի օգտագործումը դարավանդավորման միջոցով խոր իմաստ է ստանում, քանի որ հանդիսանում է լավագույն միջոց հողի էրոզիայի դեմ պայքարելու համար և հնարավորություն է տալիս ոչ պիտանի տարածություններից ստանալ լրացուցիչ բերք: Այդ իսկ պատճառով պետք է ճիշտ պատրաստել դարավանդները, հաշվի առնելով առաջին հերթին ծառերի ջրման հնարավորությունը, լավ մշակել դարավանդի հողը, ճիշտ ընտրել պտղատեսակը, սորտը և ժամանակին ու որակով կազմակերպել երիտասարդ այգու խնամքը:



Աստիճանաձև դարավանդներ

Պտղատու տնկար հիմնելու համար անհրաժեշտ է 10-12° ավելի թեքություն ունեցող լանջերի վրա անպայման պատրաստել դարավանդները, հետո տնկել այգի:

Դարավանդները լինում են մի քանի տիպի, որոնցից մեր պայմաններում լավագույնն են համարվում աստիճանային տիպի դարավանդները, որոնք խիստ փոխում են հողի միկրոռելիեֆը և խոնավության ռեժիմը՝ անձրևային ջրերը այլևս ուժեղ չեն հոսում թեքությամբ, այլ ներծծվում են ժապավենի հողի մեջ, նպաստում բույսերի աճմանը: Բացի այդ, դարավանդները բարերար են ազդում օդի ջերմային ռեժիմի կարգավորման վրա, հարավային թեքություն ունեցող լանջերի ջերմաստիճանը որոշ չափով նվազում է, իսկ հյուսիսային թեքության լանջերինը՝ ընդհակառակը՝ բարձրանում:



Պտղատու այգիներ հիմնելու համար դարավանդների լայնությունը 4-5մ պակաս չպետք է լինի: Համեմատաբար թույլ թեքություն ունեցող լանջերին կառուցում են ավելի լայն դարավանդներ, նրանց վրա տնկելով տանձենու կամ խնձորենու երկու շարք ուժեղ աճող պատվաստակալի վրա:

Եթե լանջի թեքությունը ուժեղ է և հնարավոր չէ ավելի լայն դարավանդներ պատրաստել, ապա մեկ շարք տնկելու համար բավական կլինի 3.5-4մ լայնության ժապավենը: Բարենպաստ կլիմայական պայմանների դեպքում դեղձենին, սալորենին և բալենին կարելի է տեղադրել երկու շարքով, եթե դարավանդը պատրաստված է 4.5մ լայնությամբ:

Պտղատու ծառերի տեղաբաշխումը և տնկման խտությունը

Ներկայումս տարածված է և խորհուրդ է տրվում ծառերի տնկման ուղղանկյուն եղանակը՝ այսինքն շարքերի միջև ավելի մեծ հեռավորություն է թողնվում, քան ծառերի միջև, օրինակ՝ 7x5, 7x4, 6x4, 5x3մ և այլն:


Հայաստանի պայմաններում տնկման ուղղանկյուն եղանակն ունի մեծ առավելություն այն տեսակետից, որ պտղատու այգիները հիմնականում հիմնադրվում են թեքությունների վրա, և ռելիեֆը թույլ չի տալիս միջշարքային և



միջբուսային տարածությունները մշակել երկու ուղղությամբ (շախմատաձև): Տեղաբաշխման այս եղանակը հնարավորություն է տալիս միավոր տարածությունում տեղադրել ավելի մեծ քանակությամբ ծառեր, ի հաշիվ դրա, զգալիորեն բարձրանում է ստացվող բերքի քանակը: Ծառերից ստացվում է չափավոր ներք, հետևաբար ծառերը չեն հյուծվում, բարձրանում է դրանց դիմացկունությունը ձմեռային շրջանի և մյուս անբարենպաստ պայմանների նկատմամբ, թուլանում է պտղաբերման պարբերականությունը: Բացի դրանից, հնարավոր է դառնում միջշարքային

տարածություններում պահպանել 2-2.5մ ազատ տարածություն, որը թույլ է տալիս լավացնելու ծառերի պսակի լուսավորության պայմանները:

Ծառերի ուղղանկյուն տեղաբաշխումը նպատակահարմար է կիրառել հարթ տարածություններում և ոչ մեծ թեքություն ունեցող լանջերում (5-8°):



8-12°-ից ոչ մեծ թեքություն ունեցող հողամասերում ծառերը տնկել ռելիեֆային, որի դեպքում ծառերը տեղաբաշխվում են հորիզոնականներով: Այդպիսի թեքություններում այս եղանակով ծառերի տեղաբաշխումն ունի մի քանի առավելություններ՝ նախ բարելավվում են այգիների խնամքի և բերքի տեղափոխման, այգու հողի էրոզիայի դեմ պայքարի պայմանները, բացի դրանից, հողի մշակության հետևանքով թեքություններն աստիճանաբար վերածվում են դարավանդների, առանց լրացուցիչ միջոցներ ներդնելու: Հնարավոր է դառնում կիրառել այգու ոռոգման առաջավոր եղանակներ՝ ակոսային, ենթահողային և այլն, վերանում է ջրումներից հողի լվացման վտանգը:

Ավելի մեծ թեքություն (12°-ից մինչև 25-30°) ունեցող լանջերում անհրաժեշտ է



պատրաստել դարավանդներ, ընդ որում դարավանդների ժապավենի լայնությունը և տեղադրվող շարքերի քանակը կախված է լանջի թեքության աստիճանից: Այսպես, խորհուրդ է տրվում 12-18° թեքություններում

դարավանդի լայնությունն անել 5-5.2մ, որը թույլ կտա տեղադրելու 2 շարք ծառեր: Ծառերի առաջին շարքը տնկել դարավանդի ժապավենի դրսի եզրից 60սմ դեպի ներս, իսկ 2-րդ շարքը՝ ներսի պատից 60-80սմ հեռավորությամբ: Ծառերն անհրաժեշտ է տեղաբաշխել շախմատաձև:

18°-ից բարձր թեքություններում նպատակահարմար է դարավանդի ժապավենի լայնությունը անել 4-4.2մ և տնկել խնձորենի ու տանձենի, ինչպես նաև ծիրանենի ու դեղձենի:

ԾԱՌԵՐԻ ՏՆԿՈՒՄ

Այգին հիմնում են վաղ գարնանը՝ մինչև վեգետացիայի սկսվելը կամ աշնանը՝ տերևաթափից հետո, երբ տնկանյութը գտնվում է հանգստի շրջանում: Տնկման ժամկետների ճիշտ ընտրությունը կարևոր նշանակություն ունի ծառերի կաշտողականության համար:

Մեր հանրապետության պտղաբուծական հիմնական շրջաններում տաք և տևողական (մոտ 40-50օր) աշունը ավելի նպաստավոր է տնկումների համար, քան գարունը: Տնկման աշխատանքները սկսվում են հոկտեմբերից մինչև կայուն ցրտերի սկսվելը՝ նոյեմբերի, դեկտեմբերի սկզբներին: Ցածրադիր և նախալեռնային գոտիներում, բացառությամբ որոշ ծառատեսակների, աշնան տնկումներն ավելի հարմար են կենսաբանական տեսակետից: Ծառերն ամբողջ ձմռան ընթացքում հարմարվում են ստեղծված իրավիճակին, լավ են օգտագործում կուտակված խոնավությունը և վաղ գարնանը սկսում են իրենց վեգետացիան՝ ապահովելով նորմալ աճ:



Հայտնի է, որ դեղձենին, կեռասենին, թզենին, նոնենին ձմեռադիմացկուն կուլտուրաներ չեն. հետևաբար՝ դրանց տնկումները պետք է կատարել միայն գարնանը: Մյուս ծառատեսակները՝ խնձորենին, տանձենին, սալորենին, բալենին, ծիրանենին՝ միայն աշնանը, եթե որևէ պատճառով հնարավոր չի եղել տնկել, ապա պետք է կատարել գարնանը շատ սեղմ ժամկետում:



Հայաստանի հյուսիսային գոտում և Մեղրու ու Ղափանի շրջանների ցածրադիր հողամասերում դեղձենին, կեռասենին և նշենին կարելի է տնկել նաև աշնանը: Բացառված չէ նաև վերոհիշյալ վայրերում մեղմ, տաք ձմռանը, ամբողջ հանգստի շրջանում կատարել տնկումներ, բացառությամբ չոր մերձարևադարձային տեսակների:

Հանրապետության լեռնային գոտիներում, Սևանի ավազանի, Ապարան-Հրազդանի, Լոռի-Փամբակի բարձրադիր շրջաններում ու Շիրակի հարթավայրում խնձորենին, տանձենին, բալենին, սալորենին, հաղարջենին պետք է տնկել գարնանը:

Այգու տեղի ընտրության և հատակագծման աշխատանքներից հետո անհրաժեշտ է ծառերի տնկման փուտերը նախապատրաստել տնկումից առնվազն 1.5-2 ամիս առաջ: Նախօրոք ստեղծված փուտերը դրական են անդրադառնում ծառերի կաչողականության վրա, քանի որ հանված հողը, փոսն ինքը այդ ժամանակարնթացքում ենթարկվում են արևահարության, հողմնահարման, անձրևների ազդեցության և կենսաբանական պրոցեսների ինտենսիվացման:

Աշնան տնկումների դեպքում փոսերը պատրաստում են օգոստոսին կամ սեպտեմբերին, իսկ գարնան տնկումների դեպքում՝ ուշ աշնանը կամ գարնանամուտին:

Հայաստանի ցածրադիր և նախալեռնային շրջաններում ծառատնկումը լավ է կատարել աշնանը՝ կայուն ցրտերը սկսվելուց 20-30 օր առաջ: Գարնանը տնկումը պետք է կատարել որքան կարելի է վաղ և սեղմ ժամկետում (մինչև բողբոջների բացվելը): Աշնանը տնկելիս արմատների շուրջը լցված հողը մինչև գարուն նստում է, արմատների վերքերը չեզոքանում են, առաջանում են նոր արմատիկներ, և ծառերի աճը ամռանը նորմալ է ընթանում: Ցածրադիր և նախալեռնային շրջաններում խորհուրդ է տրվում դեղձենին, կեռասենին և այլ ջերմասեր տեսակները, որոնք ձմռան ուժեղ ցրտերից տուժում են, տնկել գարնանը: Այս դեպքում աշնանը լավ է կատարել խոր բուկլից, ինչպես նաև տնկիների բունը և կմախքային ճյուղերի հիմքը փաթաթել թղթով կամ այլ փաթեթանյութով:

Լեռնային շրջաններում տնկումը պետք է կատարել գարնանը, որքան կարելի է վաղ և սեղմ ժամկետներում, մինչև բողբոջների բացվելը: Ուշ տնկված բույսերի տերևները ժամանակին բացվում են, օգտագործում են մեծ քանակությամբ ջուր և սննդանյութեր, սակայն ակտիվ արմատների առաջանալը ձգձգվում է, որի հետևանքով բույսերի կողմից ծախսված ջուրը և սննդանյութերը չեն վերականգնվում, և տնկիների զգալի մասը չորանում է:

Փոսեր փորելը: Եթե հողը հիմնաշրջված է, ապա խորությունը պետք է լինի 50-60սմ, լայնությունը 70-100սմ: Սովորական վարից հետո այն անհրաժեշտ է խորացնել և լայնացնել, հասցնելով 70-80սմ խորության և 1 մետրից ոչ պակաս լայնության:

Այն հողամասերում, որտեղ հողը չի հիմնաշրջվել, ավելի մեծ փոսեր են փորվում: Փոսերը փորելիս վերին և ստորին շերտերի հողը լցվում են փոսի տարբեր կողմերում: Գարնանը տնկումների համար փոսերը պետք է պատրաստել աշնանը, իսկ աշնան տնկումների համար՝ ամռանը: Փոսերը նախապես փորելը նպաստում է հողի հողմնահարմանը:

Փոսերում հողը պետք է լցնել տնկումից 10-15 օր առաջ, վերցնելով միայն վարելաշերտից: Եթե փորված փոսի հողը չի բավարարում, ապա անհրաժեշտ է այն լրացնել միջշարքային տարածությունից:



Փոսերի ծավալը պետք է համապատասխանի տնկանյութի արմատային համակարգի մեծությանը:

Տնկման տեխնիկա: Մինչև տնկելը ստացված ծառերը նախօրոք թաղում են այգու կիսախոնավ հողի մեջ և հանում են տնկման օրը: Տնկելուց առաջ տնկանյութը պետք է մանրակրկիտ ստուգել: Արմատային համակարգում եղած չորուկները, վնասվածքները, հիվանդ մասերը, ուռուցքները պետք է հեռացնել սուր դանակով կամ սեկատորով, 30-40սմ-ից երկար առանցքային արմատը կամ կողային արմատները պետք է կարճացվեն:

Այգին տնկելուց մի քանի օր հետո անհրաժեշտ է ստուգել, ուղղել թեքված տնկիները, ծածկել բացված արմատները և վերացնել մյուս թերությունները:

Տնկիները ցրտերից պաշտպանելու համար տնկելուց և ջրելուց հետո դրանց շուրջ պետք է խոր բուկիլից կատարել (հատկապես դեղձենու, ծիրանենու, կեռասենու): Հետագայում ուշադրություն պետք է դարձնել հողի խոնավության ապահովմանը և խուսափել լճացումից:

Նորատունկ ծառերի էտր:

Նորատունկ ծառերի էտր Հայաստանի բոլոր շրջաններում նպատակահարմար է կատարել միայն գարնանը: Այդ ժամանակ կատարվող էտի նպատակն է




վերականգնել ծառի ստորերկրյա և վերերկրյա մասերի միջև եղած համաչափությունը, որը խախտվել է տնկիները տնկարանից այգի տեղափոխելու հետևանքով: Հեռացնել բոլոր թույլ շիվերը և թողնել միայն այն ճյուղերը, որոնք

անհրաժեշտ են ծառի պսակը ձևավորելու համար: Թողած ճյուղերը կարճացնել կիսով չափ, եթե նրանք ունեն 70-80սմ երկարություն, իսկ ավելի կարճ ճյուղերը էտել մեկ երրորդ չափով: Կենտրոնական ուղեկցողը էտել 15-25սմ ավելի երկար, քան կողային հիմնական ճյուղերը: Ստորին կողային ճյուղերը պետք է էտել թույլ, իսկ վերինները՝ համեմատաբար ավելի կարճ:



Նորատունկ ծառերի հետագա էտը կատարել տվյալ պտղատու տեսակի համար ընդունված ձևավորված եղանակին համապատասխան:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):